2. Յարաշերական բառերու հետ կապուած յօդա-
ռոհթիհն:

Ա. Գրաբարի մէջ շատ յաճախեալ ոճ է՝ յա-
րաբերական բառէ մը անմիջապէս ետքն եկող բա-
ռին վրայ ։, ։, ։ յօդերը դնել:

Յարաբերական բառերն են՝ որ դերանունն եւ անով
կազմած բառերը, որ ինչ, որ ո՛ւ, որդիսէ, որդիս, որ-
շէ, յորժամ, եւայլն, նոյնագէս՝ ուր, ինչ, նախադաս
չէ, եւայլն, որոնք ուրիշ բառ մը կը յարաբերեն:

Բ. Ասոնցմէ ետքն եկած որեւիցէ մասն բանի՝ կ'առնու
։, ։, ։ յօդերը. թէպէտ հոլովուած ըլլայ կամ խո-
նարհուած, կամ մակրայ, եւայլն, նաեւ իս, ուսու, նու,
եւ նմանները. — Ի բաց առեալ նախդիր, նախադրու-
թիւն, շաղկապ ու միջարկութիւն, եւ դարձեալ ոճ,
ո՛ւ, ին, եւբեն, եւ քանի մը նմանները:

Յօդին այս գործածութիւնն ազատ է. այսինքն եթէ
յօդ չդրուի՝ սխալ չըլլար, մանաւանդ ուր որ յարա-
բերեալ բառը** ներդործութեամբ դրուած է. զորօրի-
նակ՝ Ո՞վ է որ ասէ՛տ ցքեզ. կրնայ ըսուիլ նաեւ՝ Ո՞վ
է որ ասէ ցքեզ: — Որ համբերիցէն ի սպառ, կամ Որ
համբերեսցէ ի սպառ: Բայց յօդը կ'աւելցուի վայել-
չութիւն, ոյժ եւ շատ անդամ բացայացութիւն տա-
լու համար:

Ա յօդ: Ես որ կոչեցայս անմահ՝ ահաւասիկ ի մե-
ռանել երթամ: Ես որ անմահ իուզեցայ՝ ահա
մեռնելու իւբիւամ: Պէն էօլմէզ տէնիլմիշ իբէն՝

* Այս կարգն են նաեւ հարցական բառերը՝ եթէ հարց-
մամբ չեն գործածուած, ինչպէս են՝ ինչ որ, ինչ ինչ-
ու ու. եւայլն: Ոչ գիտեմ չինչ խօսիսք: Ուր երթամն:

** Յորբերեւու բառն այն է՝ զորն որ յարաբերական բառը
յառաջ կը բերէ. ինչպէս Ա մասին մէջ ըսինք, (Երես
38:) Սուս որ խօսինս՝ Գալիլեացիք են. — Հոս յարա-
բերեալ բառն է սուս: Ասդ ուր օտարքս են. — յարա-
բերեալ բառն է սուս:

Ա եւ Տ յօդ դրուած խօսին մէջ՝ յարաբերեալ
բառը սովորաբար ներդործութեամբ կը դրուի:

իշմէ էօլմէյէ կիտէյօր ում: — Զոր ունիմ՝
զայս տաց քեզ: Զի՞նչ է այս լը ասէս յմեզ:
Այս որ եղեւս՝ ոչ էր եղեալ: — Աւելի՞ ինչ նշանս
առնել քան լը սայս առնէ:

Դ յօդ:) Տեսէք զի՞ւ լսէքդ: Տեսէ+ թէ ինչ իւ
լսէ+: Կէօրիւն քի՞նէ իշխտիյօր սունուզ: — Հա-
տոն ինձ լը պարտիստ: Զի՞նչ է այդ լը գործեստ:
Զի՞նչ է այդ զի՞ խորդաստ: — Ո՞ են դոքա որ
անցանենդ: Հաստատուն կաց յայդմ լը ու-
սարդ: Տեսանես զի՞ւ դոքայդ գործեն: — Զոր
այժմդ ունիս՝ չէ քո: Որ չեւդ էք բժշկեալ:

Ե յօդ:) Հանից լը եկուլ՝ ի բերանոյ նորա: Անոր
իլլէւ բէրնէն դիրէ հանէմ: Խուլմտուղունու օնուն
աղջընտան ըգարածաղըմ: — Զոր կամիմն զայն
առնեմ: Ես նոյն եմ որ խօսէին: Դարձայց ի տուն
իմ սաստի ելին: — Ուստի իցէ լը ունիցին: Որ
խնդրէն՝ յայտ առնէ թէ չեւ եւս եղիտ: Ելին
տեսանել զի՞նչ իցէ որ գործեցաւն: Զոր պար-
տէաքն հատուցաք: Արարին որպէս ուսանն: —
Որ առաքեացն զիս. կամ — որ զիսն առաքեաց:
Ուր երթամն, կամ — սոր եսն երթամ: — Զոր
գուն շինեցեր՝ աւերեցին: Մի լուիցուք լը նո-
քայն լուան: Մի՞նչ մանուկն էիր՝ անձամբ անձին
գօտի ածէիր: Որ յագարակին իցէ՝ մի գարձցի
յետս: Որ չեւն էր ծնեալ. որ չեւն էր բնաւիլյու
եկեալ: Որ կարին իսկ չարաբարոյք իցեն. եւայլն:
խառն:) Այս որ էջ՝ նոյն է եւ որ ել: Որ երեւինս
եւ որ ոչն երեւին:

Գ. Այսն կերպով երբեմն բուն հարցական
բառերուն քովն ալ յօդ կը դրուի:
Զի՞րդ կամ հիացեալ: Ի՞նչէս սովոր իեցեր եմ:
Նամորւ շաշմըշ գալմըշ ըմ: — Ընդէ՛ր զրկիցիմն:
Զի՞նչ խօսիստ: Զի՞րդ երկնչիստ ի սատանայէ:
Վասն որոյ եկիրդ: Զի՞ մոլիքդ: Զի՞ լայքդ, ևն:

Յօդի համաձայնութիւնը կամ մերձաւոր բառերուն
հետ դէմքի կապակցութիւնն որ Յօդուածիս մէջ տե-
սանք, իմանալու է նաեւ ամէն ցուցական բառերու վրայ
որ ։ ։ ։ ։ ։ գիմորուներով կազմուած են. զորօրինակ՝
այսպէս, ոյնպէս, ոյնշափ, ոյնպիսի, աւատիկ, ա-
հաւանիկ, այր, այրէն, անտի, եւայլն. ինչպէս օրի-
նակներն ըստ բաւականի ցուցընին :

Յ Օ Դ Ա Խ Ը Ծ Բ.

ՅՕԴԵՐՈՒՆ ՈՒՐ ԵԽ ԵՐԲ ԴՐՈՒՏՎԸ

1. Հասարակ անուանց յօդառութիւն :

Ա. Այն գոյականներն որ այս ինչ կամ այն
ինչ մասնաւորը չեն ցուցըներ, թէեւ որոշեալ ըլլան՝
գրաբար անյօդ (առանց յօդի) կը գործածուին: —
Բայց իրենց հայցականը միշտ չ նախդրիւ է*:

Բուռն է իբրեւ շման՝ ոէր: Մահուան շատ սասարիկ
է ոէր: — Ա-ի-անց կուրացուցանէ: Բազում շա-
րիս ուսոյց դադուրէն-նիւն: Որ սիրէ զերադ՝ սիրէ
դիմուսունիւն: Ոչի մարմին եւ ոսկերս ոչ ունի:
Հոգին մարմին ու սիրուիլ շանէ: — Մարմին ցան-
կայ հակառակ հոգ-ոյ: Ա-ի-շ որսոյ լինի դա-
րանակալ: Զբազումն կորոյս դինի: Իբրեւ ի
ստուերի շրջի մարդ: Զմարդիկ եւ շանառուն կե-
ցուցանէ Տէր: Կի՞ երկնչիցի յառնէ իւրմէ:

* Գրաբար լեզուի մէջ անյօդ բառի մը որոշեալ թէ ան-
որու ըլլալ ճանչնալու կառաջնորդէ հայցականը: Եթէ
տեսնես որ հայցականը չ նախդիր կ'ուզէ, նշան է թէ
անոր ուղղականն որոշեալ է, թէեւ յօդ չ'առնուր:
Այսպէս այս խօսքին մէջ՝ Ա-ի-անց կուրացուցանէ. Ա-
ի-անց որոշեալ է, վասնզի եթէ հայցականի դարձընես՝
չ նախդիր կ'ուզէ. Զն-ի-անց քանզի կուրացուցիւ է՝
ատեան արդարը:

Եթէ մասնաւոր որոշեալ ըլլային՝ յօդով պիտի ը-
սուեր։ Առաջնոյ հարդոյն հնազանդ էին գազանքն։
Մարդիկն երկրին չար էին։ Կին պատրեցաւ եւ յան-
ցեաւ։ Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել։

Բ. Այն ամէն բաներու անուններն՝ որ մէկ
հատիկ են, եւ իրենց անունը զիրենը կ'որոշէ, ա-
ռանց յօդի կը դործածուին։ Այսպէս են՝ Աստուծ-
եւ Տէր, Երիխ, Երիք, աշխարհ, ժող, յահան, հիսուս,
Դժոխ, աստվածայ*, եւ նմանները։

Ոչ որեժան յընթացից գաղարէ, եւ ոչ լուսին
կասէ ի մաշել եւ ի լնուլ, եւ օդի ի շնչելոյ ոչ
գաղարեն։ Պարտ էր ձեզ եւ յաշխարհէ իսկ ելա-
նել։ Աւազ առ եզր ժողու։

Առանձին գէպքերու մէջ հարկ է յօդով ալ
որոշել։ ինչպէս։ Աստուածդ ձեր ոչ փրկէ զձեզ։
Աստուածդյն Դանիէլի։ Տեսցուք՝ քո աստուածն զի՞
արացէ։ (Սուտ աստուածները միշտ յօդով։) Ա-
հաւասիկ երկիրս անզաւակ է։ Կայր Յիսուս յեղը
ծովուն։ եւ աշակերտքն չէին հեռի ի ցամաքէն։

Գ. Աւելի յաճախ՝ անուանց յոգնակին ան-
յօդ կը մնայ։

Զայնը զփորձ ոչ միայն +ըլլապոնեայ+ այլ եւ
հելլանուս+ եւ մոխ+ գիտեն։ Եւ դե-+ հաւասան եւ
սարսեն։ Աստանաներն ալ իը հաստուն ու իը սասանին։

Դ. *Այնպէս ածականներուն՝ որ իբրեւ որո-
շեալ զոյսական անուն զործածուած են՝ հասարակ-
օրէն եղակին յօդով է եւ յոգնակին անյօդ։

Անդամն անզանէ զլսրատ։ Զխրատ անդամն+ ան-
գոսնեն։ — Վայ անօրինին։ Վայ անօրինոց։ —
Խոյս տալ ի շարէն եւ զբարին ընտրել։ Սի
պարծեսցի կորն իբրեւ զուղիզն։

* Գրաբար սուտայ անունը Սադայէլի նշանակութեամբ
եղակի է, իսկ աշխարհաբար սուտածը գրաբար
կըսուի՝ դե-+ կամ ոյ-+։

Բայց երբեմն եզակին աւ անյօդ կը գործածուի :
Մուսա ի ծիծաղել իւրում բարձրացուցանէ զձայն իւր :
— Կոյք զրկի ի ճառագայթից արեգական : — Ցանկութիւնք սպանանեն չէ՞ :

Ե. Արնայ որեւիցէ մասն բանի, կամ նաեւ ամբողջ խօսք մը՝ իբրեւ գոյական անուն յառաջքերութիւն՝ յօդով :

Եղիցի ձեր բան՝ այսն այս, եւ ոչն ոչ : Թէ՛րեւն ի վերայ անյայտ ինչ իրաց կայ : Զի՞նչ իցէ այսունեւեւն : Զի՞նչ իցէ այն քուր միս եւսն :

2. Յատոհկ անոնանց յօդառոսթիռն :

Ա. Մարգու եւ տեղւոյ յատուկ անունները գրեթէ միշտ անյօդ կը բանին, վամողի ինքնին որոշեալ են կամ ծանօթ :

Յունեւէ չէ ի միջի, Ըստոն չէ ի միջի . եւ զբէնիւմն եւս առնուցուք : Ասէ յԱլման Յիսուս : — Եկին է Տուրօն, յԱլովիշտու : առ ափամբ Եթրապայ :

Բայց կը գործածուին նաեւ յօդով, մասնաւանդ երբ առանձին կերպով որոշել կամ մասնաւորել ուզուի . ինչպէս :

Սկսաւ Տերտիւղուն ամբաստան լինել : Եղդադն եւ Մովզագն մարդարէացան ի բանակին : — Ո՞վէ Պաւղոսն կամ ովլ Ապողոսն : Մարկիոնն այս : Մովզէսն այն : Ո՞չ այդ այն Մուշեղն է : Այս Գողգոթայս :

Բ. Երբ յատուկ անուաննք նախադաս Վէրտէր (ածական կամ բացայայտեալ) ունենան՝ իրենք սովորաբար անյօդ կը մնան, եւ վերադիրը կ'առնու զօդը :

Թշնամանես զմեծն Անահիտ եւ զմեծն զարին Առամազդ : — Գետն Երասխ յարուցեալ գայր դարիւ եւ դարիւ յաւուրս իւրոյ պղտորութեանն :

Այսպէս եւս՝ քաջը թէոփիլէ . զսէդն Տրդատ .
ամբարտաւանին Համանայ . Երուանդեանն Տիգրան .
վերինն Սիոն . գետն Եփրատ : Զօրաւարին Մուշեղի :

Գ. Խոկ եթէ վերադիրը յատուկ անուան յե-
տադաս է՝ սովորաբար երկուքն ալ անյօդ կը մնան .
այսպէս . Մանամիհր ոշտունի . Դեւոնդ երանելի .
երասխ գետ . ի Կարին գաւառէ :

Բայց անսօվոր չէ յատուկ անունն ալ յօ-
դով : Աւահանն մամիկոնեան . Մերուժանն վատա-
նշան . Կուաշն աւան . Տափերն կամրջի : — Առան-
ձին կերպով որոշեալը՝ Երուսաղէմն վերին :

Առանձին կերպով որոշելու համար աւել-
ցուած յետադաս ածականները յօդ կ'առնուն .
ինչպէս . Այս Յովհաննէս՝ մեծա եւ անուանիս :
Զակըէս՝ մաքսաւորն եւ մեղաւոր . Պազար մե-
ռեալն . (այն որ մեռեալ էր :)

3. Կապակցեալ կամ՝ զոյգ բառերու յօդառոկթիւն :

Խրարու կապակցեալ զոյգ բառերն են Վէրո-
տրաւ անունները . 1. Ածական եւ զոյական , 2.
Յատկացուցիչ եւ յատկացեալ , 3. Բացայայտիչ
եւ բացայայտեալ : Ասոնց մէջ գլխաւոր անուններն
են Գոյականը , Յատկացեալն ու Բացայայտեալը .
— իսկ ածական , յատկացուցիչ եւ բացայայտիչ՝
գլխաւոր անուան Վէրոտիւններն են :

Յօդը միշտ գլխաւոր գոյականին որոշիչն է՝
եւ ոչ վերադրին . (որն որ աշխարհաբարի մէջ շատ
որոշ կը պահուի . ինչպէս՝ Բարի որդին . Հովիւ Ռո-
բուրու :)

զոյգուն եւ ոծուն :

Ա. Գոյականը՝ եթէ նախադաս ըլլայ իւր ա-
ծականին եւ եթէ յետադաս , յօդն ինքը կ'առնու՝

ըստ կանոնի : (Միայն յօդի տեղափոխութեամբ կամ կրկնութեամբ ածականն ալ կրնայ յօդ առնուլ . որուն վրայ՝ վարը եր . 207 :)

Այսպէս՝ կ'ըսուի 1. Զհոգեւոր պատարագն ,
կամ 2. Զպատարագն հոգեւոր :

1. Մանր նաւքն ի մէջ մեծամեծ նաւացն շողան : Զիա՞րդ ի նոյն ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ ձկունոն սնանիցին :

2. Հոչակ հարէք ընդ բնաւ՝ վասն իրաց՛ դործելոց :

Այսպէս ալ՝ Մարդկեղէն բնութիւնս . զիսուն պաշտօնն՛ . զուղղորդ ճանապարհն . եօթն առաելքն* : — Աշխարհս ամենայն . բանիցս ասացելոց . իրաց՛ եղելոց . ալեացն կուտակելոց . առաքելոցն երկոտասանից . զօրն եօթներորդ :

Բ. Ատացական ունեցող գոյականներուն ալ նոյն է կանոնը՝ եթէ յօդով գործածուին : Իմ որդին , կամ որդին իմ . — զիմ մարդարէ՛ , կամ զմարդարէ՛ իմ . — զիւր ոչխարսն , կամ զոչխարսն իւր . — միշտ գոյականին վրայ դնելով յօդը :

Բայց սովորաբար՝ յետադաս գոյականն անյօդ չե գործածուիր , մանաւանդ եզակին :

Գ. Ասոր հակառակն է ցուցական ունեցող գոյականներուն կանոնը : Այսինքն՝ յետադաս գոյականը հասարակօրէն անյօդ կը գործածուի . իսկ նախադասը միշտ յօդով . (տես եր . 34 .) եւ կ'ըսուի՝ Այս այլ . եւ Այլս այս : — Միայն քանի մը դէպքի մէջ կ'ըսուի՝

Խնդրեացի վրէժ յաղէ յայդմանէ : Յօրէ յայտմանէ եւ յապա : Յասմիկ , եւայլն : Եւ-

* Թուական ածականներն ալ սյստեղ հասարակ ածականաց կարդը կը դնենք :

բայր քո այս մեռեալ էր եւ եկեաց : — Այսու
միով գործով իւրով արդարացաւ :

Յ-Կ-Ե-Շ-Ե-Լ Ե- Յ-Կ-Ե-Շ-Ե-Լ :

Դ. Եթէ յատկացուցիչ եւ յատկացեալ՝
երկուքն ալ որոշեալ են, յօդն ըստ կանոնի եր-
կուքին վրայ ալ դրուելու է . բայց սովորաբար յատ-
կացուցին վրայ միայն կը դրուի : Այսպէս՝ չորս կեր-
պով կրնայ ըսուիլ .

- | | |
|-------------------------|------------------------------|
| 1. ԶՃԱՌԱՊԱՋՄՆ ԼՈՒՍՈՂՆ . | (բնականն ու
կանոնաւորը .) |
| 2. ԶԸՆԱՊՈՂՆ ՃԱՌԱՊԱՋՄՆ . | |
| 3. ԶՃԱՌԱՊԱՋՄՆ ԼՈՒՍՈՂՆ . | |
| 4. ԶԸՆԱՊՈՂՆ ՃԱՌԱՊԱՋՄՆ . | |

1. ԽԵցգետինն ընկենու քար ընդ անջրպետան պա-
տենիցն սոտրէի : ՏՃ. Զ-Ղ-Ն-Ը՝ ըստրիտէանըն ժա-
ժոհւթեւընըն արտաշն նու նուր : (Այս առաջին
կերպ յօդառութիւնն ամենէն քիչ գործածա-
կանն է :)
2. Մարգարեիցն սերմանցն առաքեալք եղեն հըն-
ձողք : ԶԵՎԱՊԱԳԵՍՈՂՆ զպերճաբանն . եւայլն :
3. Եբաց Աստուած զբերան օձին : ԱՐԴ-ԱՐ-Ա-ՆԻ-ԱՆ օրի-
նացն հաստատեացի ի մեզ :
4. ՄԵՂԱԳՆ աիդ լուծանէ զՀՈԳԵՍՈՂՆ զօրս-նիւն : Եկ
եւ տես զբանիցդ հանդաժնաւ :

Ե. ԴԵՐԱՄՈՒԱՆԳ յետագաս սեռականը գրե-
թէ միշտ յօդով է , մանաւանդ յարաբերականնե-
րունը՝ որ իրենք միշտ անյօդ կը մնան . Որոյ գլուխն .
որոց մարմինքն . զորոց ոգիսն . որոյ որսդ :

Նոյա բանն ստի : ԱՆ-Ն-Ը-Ն-Ձ-Ը ս-ս-ս ի-Ե-Ա-Է : —
Նորա ոգին կախեալ կայ զդորա ոդւոյդ : ԶԲ-Ն-Հ
նման իցէ սորա մահս՝ նորայոյն :

Զ. Ա-Ն-Դ հանրապէս յատկացեալն անյօդ կը
գործածուի՝ երբ իւր առջեւն որեւիցէ կերպով
որոշեալ յատկացուցիչ մ'ունի :

Առաքեցայ առ ոչինը իրավունք տանն իս-
րայէլի։ Իսրայէլի ոռնը իրավունք ոչինէրուն
էրիւնեցայ։ — Իշխան աշխարհիս այսորիկ։ Մայր
որդւոցն Զեբեգեայ։ Դաւիթ զգնայր ի վերայ
ոռնէաց ոռն թագաւորին։ Ի դրսնաս ուղարկոց
ձերոց։ — Վերջին երկու օրինակներուս ամէն
բառն որոշեալ է եւ անյօդ մնացած։

Յատկացելոյն յօդառութեան վայելու-
թիւնը միայն վարժութեամբ կը սորվուի։

Բացայայտէն եւ բացայայտելոյն մէջ՝ յօդը

գլխաւոր բառինն է, ինչպէս ըսինք, եւ ոչ վերա-
դրին. իսկ գլխաւոր բառն ան է՝ որուն անուն մը
կու տանք. ինչպէս՝ Ռուսն եղեւին. արտայն Տրդատ.
Նոռնն եկեղեցի։

Է. Եթէ գլխաւոր անունն անորոշ է, այս
ձեւով անորոշ յօդ կ'առնու. Սիմոն ոմն խաղա-
խորդ. քաղաք մի Եփրոն անուն. — կամ բոլորովին
անյօդ՝ Այր մարդարէ. կին մարդ. եւայլն. ինչպէս
յառաջ տեսանք. (Եր. 193.)

Ը. Եթէ գլխաւոր անունն որոշեալ է, կընայ
յօդիւ կամ առանց յօդի գրուիլ։ Այսինքն՝ երբ
գլխաւոր անունը (բացայայտեալը) նախադաս է՝
յօդ կ'առնու. եւ երբ յետադաս է՝ հասարակօրէն
անյօդ կը մնայ։

1. Ամիսն նիսան. } (Երկու ձեւն ալ գործա-
2. Նիսան ամիս. } ծական է։)

1. Գնաց պատանեակն մարդարէ յՈւամաթ*։ Բիւ-
ցին անդունդք դայրն մարդարէ (զՅովիսան։) Գետս

* Կը գտնուի ու եւ ու գրով սկսած անուանց յնախդիր
դրուած փխիկ։

Յորդանան շուրջ զմեօք պատեալ է: Առն թագաւորի, անապատն կադէս, եւայլն:

2. Արեգ ամբ հասեալ է աւասիկ: Ի միաշաբաթոջ ամպաւ: Այն ոք ի կոկորդիզոս քաշնէ սատակեցաւ: Այրարատ քաշն: Հրեաստան Երկիր, եւն:

4. Յօդի Յառաջադասոնթիհն են Ճեղափոխոնթիհն:

Մինչեւ այստեղ աւանդուած կանոններէն եւ շատ օրինակներէն սա ընդհանուր կանոնը տեսնուեցաւ՝ թէ դրաբար լեզուի վայելութիւնը կը պահանջէ որ երկու կամ աւելի յօդառու բառերէն հասարակօրէն առաջին բառին վրայ դրուի յօդը: Ասկէ յառաջ կու գայ Յօդի Յառաջադասունը:

Ա. Պնդուն. անցելով բաղադրեալ դիմաւոր բայերուն յօդը՝ երբ նախընթաց յարաբերական ունին՝ անցելոյն վրայ կը դրուի:

Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում համարձակեալը խօսիմ: Ասոնց ուղղակի էս՝ ով թագաւոր, որուն ներ իը համարընդում իօսիլ*: — Որ բարձեալ տանէին զմեռեալն՝ զտեղի առին: Առ զեւրեւ՝ յորոյ վերայ անկեալն գնէր: Այս իցէ՝ առ որ պնդեալս եկեալ եմ:

Բ. Յօդ շառնելու բառ մը՝ ուրիշ (որոշեալ) բառի մը յօդն ինք կ'առնու՝ յառաջ դրուած ըլլալուն համար, ինչպէս. Զհոդեւորն պատարագ. (փիսկ՝ զհոդեւոր պատարագն:): Ամենեցունցն Աստուած: (փիսկ՝ ամենեցունց Աստուածն: Եկեղեցիք անուն.

* Մեծամեծ անձանց հետ խօսուած ատեն շատ անգամ առաջին եւ երկրորդ դէմքի տեղ երրորդ դէմք կը գործածուի. ինչպէս վերի օրինակին մէջ՝ փոխանակ ըսելու դիրուի էս է էս: Այսպէս եւս՝ Ցերկը հեռաստանէ ինն ծառայք քո: (այսինքն էս+ ծառայք+ քո:) Աղախին քո իօսեցու ընդ արքայիք: (աղախին+ քո իօսեցու) ընդ ժեւ ընդ արքայիք:

(փիսկ՝ անունով եկեղեցի:) Քարկոծն լինել. զմիսն ուտել. (փիսկ՝ քարկոծ լինելն . ուտելն զմիս:)

Լոյս իւրով երագրնթացն շաբաթամբ՝ ծագէ ի վերայ ամենայնի յանկարծակի: Լուեալ տասանցն՝ բարկացան ի վերայ երկուցն եղբարց: — Զինչ իցէ ի մեռելցցն յառնել: Չարագործն ի չարն դործելը առնու զանուն չարութեանն: Յոգւոցն հանել. վասն զԱստուածն ինդրելց. վասն յերկնիցն անխանելց. եւայլն: — Աներեւոյթներուն յօդը ինդիրներուն վրայ դրուած է:

5. Յօդի Ահեղադրութիւնն, եռ այլ Գիտելիք:

Ա. Ա երագրաւ անուանց (Եր. 203.) երկուքին վրայ աւ կը գտնուի յօդն Ա-Ե-Լ-Շ-Դ-Ռ-Ե-Մ-Բ-Ի-Մ-Բ կըսկնուած. այսինքն նաեւ ուր աւելորդէր յօդ: Այսպէս.

Հան զարադ մտեալսդ առ քեզ: Առ հնօքն թագաւորօքն. զկեանսն յաւիտենականսն. բանիւքս ասացելովքս. ոդիքն ճգնելոցն. եւայլն. ինչպէս վերը՝ Եր. 205: — Օրն լուսանայր կիւրակէն: Երէցն Մարին. եւայլն:

Յօդի այս աւելագրութիւնը կամ կրկնութիւնը յաձախեալ չէ:

Բ. Յոգնակի հայցականի վրայ և յօդ եկած ատեն՝ երբեմն հայցականի և գրին տեղ ուղղական ձեւով + կը թողուի. եւ կ'ըսուի՝ Զծառայտս քո: (փիսկ՝ զծառայտս.) ի մեղուցեալ+ս. յաշխատեալ+ս. զամենայն արարած+ս:

Գ. Ա եւ + դրով վերջաւորեալ բառերուն վրայ յօդէն յառաջ յ մ'ալ կ'աւելցուի: Զոր սայս առնէ. սորայս մեծ է. զինչ դոքայդ խօսին. այսոյն եւ ոչ. քոյդ. նոցայն. ովսաննայն. Գողգոթայս, եւայլն:

ՑԵՒՑԵԼՈՒՑԸ

Յոհանական մակրայներն որոշեալ յօդերու տեղ:

Ա. Խնչպէս որ մասնական անորոշ մակրայներն
իբրեւ անորոշ յօդ կը գործածուին, (եր. 189.)
նոյնպէս՝ եւ աւելի յաճախ՝ որոշեալ յօդի տեղ կը
բանին ցուցական որոշեալ (տեղական) մակրայները,
դէմքին եւ հոլովին համեմատ։ Այսինքն՝

Ս. Այս. տրկն. այտէ, բցուկն. այտ, ներգոյկն.

Դ. Այտը, " այտէ, " այտը, "

Ն. Անտը, " անտէ, " անտ, "

Տրական միշտ իմանալու է ի կամ առ նախ-
դրիւ, եւ ոչ վերջահոլով։

Տրկ.) Առ նոյ զաղաւնին անդրէն առ իւր ի պատու-
անտը։ Երթ դու առ մեղս անտը, եւ տես զիարդ
գործօն է։ (Փխկ՝ ի տապանն. առ մեղսւն.՝)

Բցու.) Մի յերիսուսնից այտէ մատնելոց է զիս։ Բե-
րէք ի յիշնց այտէ։ — Ի դրայ անտէ ծառն ճա-
նաչի։ Մի զոք արգելուլ յիւրոց անտէ։ Թագէսս
մի յետնասունից անտէ եկն յեղեսիա՝ բժշկել
զԱբգար։ (Փխկ՝ յերկոտասանիցու. ի ձկանցու.՝
ի պտղոյն. յիւրոցն. եւայլն.՝)

Ներգ.) Մեզ յանապատէ այտ ուստի՞ իցէ այնչափ
հաց։ Գրեցի առ ձեզ ի նշնէ այտը։ Զկունք որ
ի գետ այտը են՝ սատակեցին։ — Զկունք որ է
գետ անդ էին՝ սատակեցան։ Ոչ ես իսկ տեսի
զքեզ ի պարտէվ անդ։ (Փխկ՝ յանապատիս. ի
թղթիւ. ի դետու.՝)

Այսպէս նաեւ ցուցական եւ ստացական դե-
րանուանց հետ։ Նոյ էր այր արդար յաղէն անդ իւ-
րում. ի ժամանակի այտ յայսմիկ. ի քարանց այտէ
յայսցանէ. յառնէ այտէ յայդմանէ. յորդւոյ այտէ

իմմէ. ի զաւակի այդը քում: Ի խօսել անդ իմում.
յասել անդ իւրում:

Եթէ մակրայներուն տեղ ։, Դ. և յօդերը դնենք՝
կելք ճիշդ դիմորու յօդի կանոնաւոր գործածութիւնը.
Ի ժամանակիւ յայսմիկ. յառնէդ յայդմանէ:

Այս կանոնիս հակառակ՝ սովորական է Ի վա-
զիւ անդը. (փխկ՝ անդ.) երկրորդ օրը. երեսէ ին-
չեւ, որ կ'ըսուի նաեւ Ի վազիւն:

Այս ցուցական մակրայները գործեալ իբրեւ
ցուցական (ածական) գերանուն կը գործածուին,
ինչպէս վարը (ԳԼ. Ը.) կը տեսնենք. — Թէպէտ
շատ աւելի յաճախ իբրեւ յօդ կը բանին:

ԳԼՈՒԽ Ը.

Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ա Ն Ք

1. Հական, Յուցական եւ Ստացական դերանուննեո:

Ա. Երբեմն անուան բայի կամ խնդրոյն վրայ
դէմքին համեմատ գերանուն մ'ալ կ'աւելցուի՝ ոյժ
եւ զարդ տալու համար:

Ի մանենդ յոր ելեր՝ է ոմին մեռյիս: Ամուրդու-
ղը շինելը՝ այդ ձեզ լիցին: Որդուց մարդիան
ատամունք ի-րենց զեն եւ նետք են: Լուսնի շիք
է-ը լոյս առանձինն: Այբս թշնամի Համան՝ ս-
արար զիրսս զայս:

Բ. Գրաբարի մէջ ստացական ածականը
պէտք է իւր գոյականին քով ներգործութեամբ
դնել: (Բաւական չէ ստացական յօդն աշխարհա-
բար ոճով. Աչս տեսաւ. լսեմ յայնդ:)

Տեսին աշք էմ զփրկութիւն + . Ափ + լիցի ի
վերայ բերանոյ + : — Մի միայն զռտա էմ (լուաս-
ցես), այլ եւ զձեռս եւ զզլուխ:

Գ. Առվորական կարգէն դուրս, (որ եր. 34.
տեսանէք,) ցուցականներուն կարճ հոլովածը գոյա-
կանէն ետեւ ալ իր մնայ, մանաւանդ յոգն. ուղղա-
կանի եւ նախդրիւ հօլովոց մէջ: Եւ կըսուի՝ իրքս
այս. զւարիսդ շայտ. եւայլն. — Քիչ տեղ նաեւ
վերջահոլով՝ ի տանս յայսմ. ի տեղւոջն յայնմ:

Եթէ տեսանէք զառնդ շայտը զւարութիւն: Կը
տեսնէ՞ + աս մորդուն ւըրունիւնը: — Արքս այս
խոռվեցուցանեն զքաղաքս մեր: (Փիսկ՝ զառնդ
շայտորին, արքս այսուին:)

Դերանուանց հօլովմանց մանր զարտուղութիւններ
կը գտնուին գրոց մէջ, ինչպէս՝ Այս երանելոյս. յայն
տանն, եւայլն. փիսկ՝ այսր երան. յայնմ տան:

Բայց անեղական անուանց կանոնաւոր է եղակի ա-
ծական տալ՝ երբ եղակի նշանակութեամբ են. ինչպէս:
Այսու կենօք, յայնմ արքունեաց. ընդ այնք վրիժուց.
Էրուկ կամօք, որում իդի բարեաց:

Գ. Ինչպէս տեղական (անորոշ) մասնական
մակրայները մասնական անուանց տեղ իր բանին,
(Երես 189.) նոյնպէս ալ տեղական (որոշեալ)
ցուցական մակրայները ցուցական դերանուանց
տեղ իր դրուին՝ իրենց գոյականին յետագաս,
— թէ եղակի եւ թէ յոդնակի թուոյն մէջ:
Այսինքն՝

Այսը, այտը, անտը. տրական. փիսկ՝ յայս, յայտ.

Ասոք, այտէ, անտէ. բցուկն. փիսկ՝ յայսմանէ, եւն.

Ասոր, այտը, անտ. ներգոյ. փիսկ՝ յայսմին, եւն:

Տրկ.) Եկ մուտ դու ի տուն այսը. (փիս. ի տունս յայս:)

Բցու.) Ակն ունիմ ապրել ի գժուարին հիւանդու-

թենէ ասոք: Փրկեայէ զմեղ յավարչէ ասոք

շարէ: Ի կապանաց ասոքի. ի պատուհասէ այոքի:
Ի լերանց անոքի. (ի լերանցն յայնշանէ:)
Ներդ.) Եւ ոչ՝ թէպէտ եւ ի քաղաքի ասոր ոք
կայցէ կարիցէ տեսանել զտեղին:

2. Յարարերական դերանոնն:

Ա. Յարաբերեկան գերանունն, ինչպէս ըսած
ենք՝ (եր. 37.) յառաջ կը բերէ (կը յարաբերէ) ու-
րիշ անուն մը կամ գերանուն մը. եւ այն յառաջ
բերուածը կ'ըսուի Յարաբերեալ:

Յարաբերեալն ու յարաբերականը՝ երկուքն ալ իրենց
յատուկ բայն ունին. ուստի խօսքը հարկաւ երկու նա-
խադասութիւն է. — մէկը Գլխաւոր, որուն մէջն է յա-
րաբերեալը, եւ միւսն Երկրորդական ու կախում ունե-
ցող, որուն մէջն է յարաբերականը: Ինչպէս այս խօս-
քիս մէջ, Մեծ են լորին՝ որ+ անցին ընդ մեզ. (լորին՝
յարաբերեալ. որ+՝ յարաբերական+) Հոս դլխաւոր նա-
խադասութիւն է՝ Մեծ ին լորին. եւ երկրորդական է՝
Որ+ անցին ընդ մեզ:

Բ. Յարաբերականն ու յարաբերեալը հոլո-
վով իրարու չեն համաձայնիր. այլ իրենց բայէն
կախում ունի հոլովով:

Ո՞վ է աս՝ որ դիմեալ դայ: Ո՞վ է աս՝ որ ելքը իս-
տոյ: — Ո՞վ իցէ նա՝ լորմէ այսպիսի բանս լսեմ:
Այր մէ՝ որո՞մ Յիսուսն ասեն՝ եբաց զաշս իմ:

Գ. Յարաբերականն ու յարաբերեալը թուով
համաձայնելու են. այսպէս:

Կոչեաց զժուայսն՝ որոց տուեալ էր զարծաթմն:
Կանչեց ծառաներն որոնց որ սուսիը որո՞մ էր:

Միայն որ՝ եզակի ձայնիւ ստէպ կը գործա-
ծուի յոգն. ուղղականի եւ նախադրիւ հոլովոց մէջ:
Զարիքս որ լինին՝ ուստի իցեն: Զարիներն որ չ'ըլլան՝
ասոքի են: — Բանիքն լոր խօսեցար. եւն:

ՅԱՐԱԲԵՐԵԼՈՅՆ ՆԵՐՆԵԼ:

Դ. Շ ատ անգամ այն յարաբերեալը կը չեւ
լուի, այսինքն չի դրուիր, ու լուելեայն կամ զօրու-
թեամբ կ'իմացուի. եւ այն ատեն՝ միայն որ՝ կը նշա-
նակէ այն որ, այնուիկէ որ. եւ որո՞ւմ՝ կը նշանակէ
այն որ, այնուիկէ որո՞ւմ, եւայլն:

Ե. Այս զեղմանց մէջ յարաբերելոյն նախ-
դիրն ու նախադրութիւնը որ յարաբերականը կ'առ-
նու: Անոր համար լաւ միտ դնելու է որ արդեօք
յարաբերելոյն են՝ թէ յարաբերականին:

1. Զ. Երբ այն եւ որ՝ երկուքը նոյնահոլով
են, բաւական է որ յարաբերականն իւր բնական հո-
լովովը: Այսպէս:

Երբեւ զի մեծ է որ եգիտ զիմաստութիւն: Քանի
սակաւէք են որ գտանեն զնա: (Փիսկ՝ այն որ եգիտ,
այնուիկէ որ գտանեն:) Երանի որո՞ւմ թողութիւն
եղեւ. (այն որո՞ւմ:) Այլ մի ստամբակ եմ ես,
բառնամ չը ոչ եգի. (չայն չը:) Տուր չը ու-
նիսդ. (Չայտ չը ունիսդ:) Ուռու դատիս զընկերն
զանձն քո դատապարտես. (այնու որո՞ւ դատիս)

Կոչականն ալ ուղղականի կարգն է: Ո՛ որ յաղթե-
ցեր հակառակորդին. (ո՛ որ յաղթեցեր:)

2. Է. Երբ այն ուղղական է եւ որ հոլովեալ
է, որ յարաբերականին հոլովը յարաբերելոյն ուղ-
ղականին տեղն ալ կը բռնէ: Այսպէս:

Տուժեսցի որոյ զհրդեհն հանեալ իցէ, (այն՝ որոյ
հանեալ իցէ:) Ծանիցեն զքեզ՝ յորո՞շ վե-
րայ մեռար դու. (այնուիկէ՝ յորո՞շ վերայ:) —
Եւ չը ունիցին բարձցի ի նմանէ. (Եւ այն եւս
չը ունիցի:) Ունեցածն ալ ի՞սունուի էր մէն: —
Զոր այժմդ ունիս՝ չէ քո: — Բազում բռնաւ-
որը նստան ի գետնի, եւ որո՞ւմ ոչ կայլ ակն՝

թագ եղաւ . (սըսամ ոչ կայր ակն՝ և թագ եղաւ :)* Ըստ հաջր իշխաներ գեղին նստան , էւ Աստացունք մարդը իսկ դրաւ :

3. Ը. Երբ այն հոլովեալ է եւ որ ուղղական , որ յարաբերականը յարաբերելոյն հոլովը կ'առնու :

Ուստի խնդրէ ի քէն՝ տուր . (այնմ որ:) Ուստի մտանեն՝ շտայք թոյլ մտանել . (այնոցի որ մտ:) Գտին ժողովեալ զմետասանսն եւ լըս ընդ նոսայն էին . (լայնուի որ+ընդ նոսա էին:) Չեկաց յոր ինչ էրն . (յայնմ որ ինչ էրն . — Հոս որ ինչ խնդիր բնութեան է :) Կարդային ու որ յամենայն ժամանակի պաշտպան լինէր ազգին իւրեանց . (ու այն որ յամենայն ժամ :)

4. Թ. Երբ այն եւ որ երկուքն ալ հոլովեալ են այլեւայլ հոլովով , որ յարաբերականը — երբեմն յարաբերելոյն հոլովը կ'առնու եւ իւր հոլովն անհետ կ'ըլլայ , — եւ երբեմն իւր հոլովը կը պահէ ու յարաբերելոյն հոլովն անհետ կ'ըլլայ :

Յարաբերելոյն հոլովը .

Վասն որոյ գրեցէքն առ իս . (վասն այնորի ուր գր :) Յիրաւի ընդ որոց յանդգնեցաւն՝ կրէ պատիժա . (ընդ այնց յոր յանդգն :) Մեք երկիր պազանեմք որութեացն . (այնմ լոր դիտ :) Արժանի ըստ որոց գործեացն՝ ինչ առնուցու . (ըստ այնց լոր դոր :) Գոհացիր լորոց առերն . (լայնունէ լոր :) Յարաբերականն իւր հոլովովը .

Արկ զիւրեւ՝ յորոյ վերայ անկեալն գնէր . (լայն՝ յորոյ վերայ :) Առաքեա յոյր ձեռն առաքելոցն ես : Ուստի պէտք էին բժշկութեան՝ բժշկէր . (լայնուի :)

* Թագ երաւ , տես եր . 174. ուր հյց . խնդիր սեռի է ն-է : (Սիալ թարգմանած կ'ըլլանք՝ եթէ ըսենք . Զամանացին էւ-էւ ն-է դրաւ-ից-իւ :)

որոց պէտք էին :) Վնաս ինչ ոչ գտի յառնս յայս-
միկ՝ ուրոց շարախօսէքդ զդմանէ . (յայնցոնէ ու-
րոց շարաս :)

Ժ . Այս զեղչմանց մէջ նաեւ լոելեայն իմա-
ցուած յատկացեալներուն հոլովն ու նախդիրը յա-
ջորդ յարաբերականին կ'անցնի , — որ երբեմն ալ
աննախդիր կը մնայ : Տես եր . 179 :

Որ բամբասէն՝ կորուսանէ զանձն իւր եւ ո՞րոց
լսենն . (փիսկ՝ ոյնոցին որ+ լսենն . այսինքն՝ զան-
ձինս այնոցին որ+) Զպէտսն իմ եւ ո՞րոց ընդ իսն
էին՝ պաշտեցին ձեռքս այս . (եւ զպէտս այնոցին
որ ընդ իսն էին :)

ԺԱ . Երբեմն յարաբերականն անհոլով (ուղ-
ղական) կը պահուի . եւ կըսուի որ կամ որ+ , փիսկ՝
որում , (այնմ որ .) կամ փիսկ որոց . (այնոցիկ որ .)
կամ փիսկ որ , (զայն որ .) եւայլն :

Լքաք նախատանք որ+ նախատէին զմեզ . (փիսկ՝ ո-
րոց նախատէին . այսինքն՝ այնոցին որ+ նախս .) Մեծ
է ողորմութիւն Տեառն՝ որ կարդան առ նա : Զի-
արդ դժուարին է՝ որ զինչսդ ունին՝ մտանել
յարքայութիւն . (որոց կամ այնոցին որ .) Յիշես-
ցուք մեք որ ասացաւն . (որ ասացաւն . — տես
նաեւ վարը՝ եր . 218, 1 :) Դուք ոչ մտանէք , եւ որ
մտանելոցն են՝ արգելուք . (ոյնունին որ մտ .) Որ
կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զե-
րեսս . (յայնտանէ որ .) Ծագեա զողորմութիւնս քո
ոյ+ ճանաչեն զքեզ . (յորս , յայնունին որ ճան .)

Այսպէս եւս՝ Երանի որ+ սուրբ են սրտիւք :
Երանի . որ ոչ գայթագղեսի : Վայ որ ծիծաղիքդ
այժմ : Վայ որ+ ասեն զւարն բարի . (որոց .)

ԺԲ . Երբեմն դարձուածով մը՝ յարաբերա-
կանն իւր յարաբերեալէն յառաջ կ'անցնի :
Որ մսիթարէն զիսնարհս՝ մսիթարեաց զմեզ

Աստուած . (փիսկ՝ Աստուած որ մխիթարէ զխոն :)
Որ բասիլիսկոսն կոչե առէ ինչ օքէց՝ հայելով միայն
սատակէ զմարդ : Անդ որ ի վեր յերկինս իսպար
լինի՝ ուստի իցէ . (այսինքն՝ Ուստի իցէ իսպարն
որ անդ ի վեր յերկինս լինի :) Ուր է որ ծնաւ
որ+այն Հրեից : Զորոյ ես զգլուխն հատի՝ շՅու-
հաննու, սա է . (այսինքն՝ սա է Յովեաննէս զորոյ
ես զգւ :) Զորոյ զրեաց Մովսէս եւ մարդարէքն
դտաք շՅիսպար : Որ ընդ նմա էին Հրեային :

ԺԳ . Այս նախադաս յարաբերականն երբեմն
իւր յարաբերելոյն հետ հոլովը կը փոխէ . այսինքն՝
յարաբերականը յարաբերելոյն հոլովը կ'առնու եւ
յարաբերեալը յարաբերականին :

Զորոյ վասն կոսնոսի եւ Արամազդայ ուստի նիւն+
իցեն՝ ամաչեմ ասել . (ասել զպատճունիւնոն որ+
վասն կոսն . եւ Արամ . իցեն :) Ապստամբութիւն
ուսուցաննս որոց ի հեթանոսա ամենայն Հրեայ+
են . (ամենայն Հրեից որ+ ի հեթանոսա են :)

ԺԳ . Շատ անգամ յարաբերականին (էա-
կան) բայր զօրութեամբ կ'իմացուի . այսպէս . Որ+
ընդ էս՝ ըսել է Որք ընդ իսն էն, կամ էին, կամ էցեն :
Եկն քահանայապետն եւ որ ընդ նմա . (փիսկ՝ եւ
որք ընդ նմա էին :) Ամենայն արք որ է ուն . (են :)
Փախուստն որ է բանդէ անդէ . հոգի մարդոյն որ է
նմա . հացն որ յերինից էջեալ . ծովին որ յետոյ . (ե-
տեւի ծովը .) ջուրք որ է վերոյ երինից . (երկնքին
վրայի ջրերը :)

Ասոնց հոլովածն այսպէս . Որոց ընդ նուն .
(անօնց հետ եղողներուն .) զորս ուր նմա . (անօր քո-
վինները .) յորոց ընդ էսն . (հետս եղողներէն .) զորոց
է ծովս . (ծովին մեջիններուն վրայ .) — որ ածա-
կանի պէս կը զործածուին՝ ինչպէս տաճկ . եանը-
տածէ, աշողէնէ, էլէր+էլէրոտէն, եւայլն :

Այսպէս նաեւ՝ Եկին որ+ շմբուռներորդ ժա-
ման. (Ժամը տասնումեկիններն եկան։) Որ+ ու ճա-
նապարհաւն՝ նոքա են որք . . . (Ճամբու վրայիններն
անոնք են որ . . .) Որ ընդ իս ամենեքին. (Հետո ըլլող
ամենքին։) Թագաւորն հրամայեաց յափշտակել զա-
մենայն ինչս որ է Քըլսուս հաւատացելոց։

ԺԵ. Յարաբերական գերանուան տեղ եր-
բեմն (տեղւոյ ու ժամանակի համար) ուր, ուսորի,
էբրեւ, յորժամ մակրայ կը գործածուի։

Ի պատերազմի ի մահուանէ մի երկնչիք՝ ուր ես
ոչ մեռայ. (Փիսկ՝ յորում։) Դարձայց ի տուն իմ
ուսորի ելին. (յորմէ ելի։) Ի ժամանակի էբրե-
մեռաւ Աղեքսանդր. (յորում։)

Երբեմն ալ չ շաղկապ կը դրուի՝ Փիսկ որ։
Որպէս հրդեհ չ զի ոճով ուտիցէ զամենայն, սոյն-
պէս եւ զդրացեաց զաղքատայ՝ հարուստք ճա-
րակին զամենայն ինչ։ Ինչու որ իբոքն ամեն բան
իւրիսու իւ աղուտէ, այնու ալ աղուտ դրացինե-
րուն ամեն բանը մեծամեծները իւսուտէն։ — Իբրեւ
ուխք չ զնան։ Որպէս փայլակն չ ելանէ յա-
րեւելից։ Ի ժամանակի դէ հարկաներ Աղեքսանդր
զՊարեհ արքայ Պարսից։ Եւն։

ԺԶ. Որ՝ իբրեւ յարաբերական եւ նաեւ
իբրեւ հարցական՝ գրաբար անյօդ կը գործածուի։
Զաւակ պատուական ո՞ր է մարդոյ. ոյք երկնչին
ի Տեառնէ։ Զաւակ անարդ ո՞ր է մարդոյ. ոյք
անցանեն ըստ պատուիրաննն։ Պահեա զպատուի-
րանս. ասէ ցնա, շը՞ս։ Կայ եւ այլ ճանապարհ.
ո՞ր իցէ այն։ (Եւ ոչ՝ ո՞րն իցէ. շը՞սն։)

Ընդհանրապէս դերանուանց շատ անկանոնութիւն-
ներ կը գտնուին գրոց մէջ, բայց աւելի յաճախ՝ յա-
րաբերականներու մասին։ Գլխաւորներն ասոնք են։

1. Անհոլով եւ աննախդիր ո՞ւ՝ փխկ զբ, քիչ տեղ նաեւ փխկ յորսում. (աշխարհաբարի նման)

Փոքր է այս առ այն ո՞ւ ասելոց եմ: Զամենայն ինչ ո՞ւ առաջի գնիցեն՝ ուղղեցցեն: — Տնկեցաւ յերկրի՝ ո՞ւ վասն Աղամայ նզովք ծնան. (յորսում:)

2. Յարաբերականն անփոփոխ պահելով՝ անկե ետեւ դերանուն մ'աւելցընել՝ հոլովեալ, ինչպէս՝ Ո՛՛ ... Նորս, փոխանակ ո՞ւյ: * (Այս ձեւը տաճկերէնի նման կազմութիւն է:)

Զաւակն այն՝ ո՞ւ Նույս օրհնին ազգք. (ո՞ւյ:)

3. Յարաբերեալը յարաբերականին հոլով առած, իւր բայէն անկախ: Երբեմն աւ յարաբերականը՝ յարաբերէլոյն:

Ամենայն ինչ որ դիւրաւ անկանի ի բուռն՝ ընդ արհամարհանս ունիմք. (փխկ՝ զամենայն ինչ:) Ինչ ո՞ւ դէրսու ներսունի՝ անորդ իւ համարին: — Զայտ զոր ասեսդ՝ ի տրտմութեան դիպի: Յաւելցի ձեզ ո՞ւն լսէքդ. (փխկ՝ ոյտ զոր ասեսդ. ո՞ւ լսէքդ:)

Բայց գործածական է՝ Յօրէ յորմէ, (փխկ՝ յօրէ յորսում կամ յորմէ օրէ, այն օրէն օր:)

Դարձեալ՝ բային քով ոյս, Նո, Նոյն դերանուններ աւելցընելով. ինչպէս. Զվեհ զոր անարդեցին շինողքն՝ Նո եղեւ գլուխ անկեան: Ամենայնի որոյ իցեն թեւք եւ թեփք՝ զայն ուստիցէք: (Այսինքն՝ վեհ զոր. զամենայն օրոյ:)

ԳԼՈՒԽ Թ.

Է Ա Կ Ա Ն Բ Ա Յ Ե Ր

Ա. Խական բայերը սեռականի քով անորոշ ուղղականով մը՝ ունենալ կը ցուցընեն. (Ճիշդ տճկ.)

* Ասոր հետ շփոթելու չէ այն երրայեցի յարաբերականն որ սուրբ Գրոց մէջ շատ յաճախեալ է. այսինքն՝ հոլովեալ յարաբերականէն ետեւ նոյնահոլով դերանուն մ'ալ աւելցընել. ինչպէս. Որոյ որդի Նորս. ո՞ւս ձեռք իւրիանց. ուր աւելցրդ են երկրորդ դերանունները: Տեղիդ յորսում կաս դու ի ո՞ւն՝ երկիր սուրբ է: Փայտ պաղարեր՝ ո՞ւս սերմն իւր ի նմին:

նման:) Բայց անուն բայի՝ այն անորոշ ուղղականնեւ, եւ ոչ թէ ունեցողը՝ որ սեռական կը դրուի: Են իւ անդ եղբարք հինգ: Հու հինգ եղբայր անիմ: Պէսիմ օրատա պէշ գարտաշըմ վար: — Է՞՞ ոք + աստ փեսայ կամ որդիք: Իսկ կինջն զի մել եր. (հաղա ինչին ինչ յանցան + անէր:) Ուր իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ այր ու բուցէ, եւ այր իայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ: Դատաստան իայ իւ ընդ քեզ. (+էպէ հետ բու անիմ:) Ու իոյ մեր աւելի քան զհինգ նկանակ: Զի + մեր թագաւոր: Թագաւոր լունին:

Բ. Աեռականի տեղ երբեմն տրական ալ կը դրուի: Զի՞ է մել, որդեակ. (ի՞նչ անիմ. — անուն բայի՝ զի՞:) Զի՞նչ անուն է մել: Բանգք ինչ էն ինչ ընդ քեզ: Քեզ հետ խօսելի+ անիմ:

Այսպէս եւս՝ կամք էն ինչ. կամ եղեւ ինչ. (ի՞ուղեւ, անշեցի.) Խորհուրդ ի մտի եղեւ նմա. (մուծեցի:)

Գ. Այս պակասաւոր բայով եւ երկու սեռականով՝ հարցական կամ բացասական խօսք կը կազմուի այս մատոք. ի՞նչ (բորժ) անիմ ասոր իամ անոր հետ: Զի՞ իայ մեր եւ + զի եկիր տանջել զմեզ: Ի՞նչ անիմ մեղ հետ, կամ ի՞նչ ի՞ուղեւ մեղե՞՝ որ եկոր զի՞լ բանջելու: (Անուն բայի՝ զի՞:) — Զիայ ինչ + եւ արդարոյն այնորիկ: (Անուն բայի՝ ինչ:)

Դ. Լ, եր, իցէ բայը սեռականով յարակատար եւ գերակատար ժամանակ կը ձեւացընէ: (Եր. 151, 152 եւ 159:)

Քանզի եր յառաջագոյն ուեւեւլ զՏըռփիմաս ի քաղաքին. (յառաջ ուեւեւ էն զՏըռփ: Տես Ե՛) Լուեալ իցէ յեր: Լուծ եւ անշուշու: Իշիթմիշ օլաճագ սընըզ: — Զբարիլոն ի՞մ չիտ տեսեալ. (ուեւեւ լունիմ:) Զեւ իցէ հասու խօսեալ: Մինչ

չեւ մեղուցեալ ինչ ուրսու+ էր նմա.* (բեր և ին
անը ըստ հը ուրսու+)

Ե. Ապյօց կրնայ նոյն սեռականը զեղուիլ,
(չդրուիլ,) 1. երբ գործոյն ընողն յայտնի է կամ
ինք իրմէ կ'իմացուի. Եւ 2. երբ գործոյն ընողը
կ'ուզենք անյայտ թողուլ:

1. Զի՞նչ ունիս զորուչ իշէ առեալ. (իցէ + առեալ:)
Ի՞նչ ունիս որ ուրսու+ նըլսու: Նէ՞ն վար տըր քի
ալմրշ օլմայա օրն: — Եթէ ոչ եաք յամեալ՝
արդ երկիցս իսկ դարձեալ էր այսրէն. (մէր:) Եթէ
ուշաց նըլսոյն+ հէմայ երիս անդամ ու հոս
դորձու+ ի՛նըլսոյն+: — Մինչ չեւ խօսեալ իշէ՝ ու-
սիր. մինչ չեւ քննեալ իշէ՝ մի տար պատասխանի.
(+*) Ուստի զգիրս դիտէ սա, զի ուսեալ բնաւ
վէ+. (սորտու:)

Նոյնպէս ունենալ նշանակութեամբ: Աչք է՞ն
եւ ոչ տեսանէք, ականջք են եւ ոչ լսէք. (այս-
ինքն՝ աչք զո՞ն յեր. ականջք են յեր:

2. Ցովսէփ եղ զՅիսուս ի կռածոյ գերեզմանի, ուր
չէր բնաւ զոք եղեալ. (չէր բնաւ զոք ուրսու+ ե-
ղեալ:) Ուր ամենելին մէկը դրած չին: Եւ հայե-
ցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ի
գերեզմանէն: Զնշանան ամենայն տուեալ է քեզ:**

* Կ'ըսուի նաեւ առանց եական բայի՝ Զեւ մեղուցեալ
ինչ ուրսու+ նմա:

Իսկ լինէլ բայով՝ իրբեւ հրամայական ձեւ. իմ արձա-
կեալ լիշէ զքեզ. (-ընկած ըլլու:)

** Նոյն կերպով կը գտնուին քիչ տեղ՝ նաեւ լինի՞մ բայով
բաղադրեալ ժամանակներ:

Զքաղաքն Պաղոմայեցւոց տուեալ լիշէ նոցա պար-
գեւ. (այսինքն՝ մէր տուեալ լիցի նոցա. անոնց դրա-
ըլլուն+:) Ի տասանորդէ զմաքս թողեալ լիշէ ձեզ. (մէր
թողեալ լիցի ձեզ. նորհոծ ըլլուն+:

Կամ աւելի համառօտած՝ առանց եական բայի:
Տուր ինձ հրաման, եւ ասէ թագաւորն. դուիւլ

Զ. Եւ, եր, իցե էական բայն իրմէ ետեւ որ,
ուր, ով, յորժում յարաբերականներով մէկտեղ կը
գործածուի այնպէս՝ ինչպէս աշխարհաբար կ'ըսենք՝
Կոյ մորդ որ ... կամ ուել իոյ որ ... կամ առեն ի ըլ-
լոյ որ ..., եւայլն: — Նոյնը իոյ բայով ալ:

Է ձուկին՝ յորմէ արիւն այնչափ ելանէ՝ որչափ յոչ-
խարէ ոչ ելանէ. (Յուի իոյ որ ...:) — Եր երբեմն
չ էիք կռապարիշտք: Առեն ճը իոր որ իւսուսուլ
եիտ: — Եր երբեք չի բնաւ չէր ամենեւին ինչ:
Որ անարգէն զիս՝ իոյ որ դատի զնա. (իայ մէն որ):
Գոյ որ շարախօս կայ զձէնջ, Մովսէս: Եր որում
անսուն էր Յեսու. (Աէիւ իոր որ): — Տայր պտուղ՝
Եր որ վաթսնաւոր, եւ եր որ երեսնաւոր. (տճկ.
+իմ ալլուլ, +իմ օլուսուլ): Եր ուր կոտորէր եւ
եր ուր գերի տանէր, (տճկ. +իմնի իպուր՝ +իմնի
միւրէր իորի): — Է չի շիշանի եւ է չի բորբոքի.
(Այ ճը իւ մարէ՝ մէյ ճը իւ բունիի):

Է. Պարձեալ շատ հեղ էական բոյն ալ կը
լուէ, եւ կը մնայ միայն կրկնած որ, ուր:

Ժողովեցին զմանանայն՝ որ շատ եւ որ սակաւ.
(որը շոր՝ որը +իւ:) — Բազմեցան ի վերայ դալար
խոտոյ դասք դասք՝ ուր հարիւր եւ ուր յիսուն.
(ուել ճը հարէր՝ ուել ճը յիսուն:)

Ը. Եւ, եր, իցե կը դրուի աներեւութի հետ,
եւ կը յուցընէ ուերտ ե, իւրելք ե, իւրքն ե, եւայլն.
Եւ կամ ինչպէս աշխարհաբար կ'ըսուի՝ երնուլ ի ըլ-
լոյ, իւրելքունի, չի յուսուցուիր, եւայլն: Այսպէս
նաեւ չի, չիոյ, չիոյ:

Քեզ. (տուեալ լիցի իւ:) Ասէ Սարա յԱրբամ. ուսիւն-
քեզ զշագար: (ուսիւնք ըլլում:) Երդունեւ յարեւն Փա-
րաւոնի, ոչ ելանէք աստի: Փորունակ իւնաց գոյ եր-
դունացան ըլլում, որ ունի չիւ ելլէր: — Հրաման ետ
Անահիորոս եւ ասէ. իւսուցուիւլ իւ զքեզ ի գործ քահա-
նայապետութեան:

Զիարդ էցե մինել զայս։ Աս ի՞նչեւ մինելու է։
Պունա նէ՞ մանա վէրմէլի։ — Է եւ այլազգ եւս
իւսնաւ։ Ուրել իւրո ու իւ հասկցուի։ — Զինչ
ինչ սունել եր՝ եւ ես ոչ արարի։

Այսպէս եւս յաճախ կ'ըսուի՝ Անդ է ուստանել
կամ էր կամ էցե ուստանել։ այլ ինչ չիայ ուստանել։
չ+ սունել թէ... եւայլն։

Թօ. Եշ, եր, էցե անդէմ՝ սեռականի քով (ա-
նուն բայի աներեւութով՝) ժործ, պաշտօն, էր+, կամ
մէկ բանի նորոգուի, բնութիւն եւայլն կը ցուցընէ։

Ճշմարդկութեալ է երբեմն սաստել եւ յան-
դիմանել, եւ երբեմն խրատել եւ ողոքել։ 2է
սուղջ մրաց՝ զշարժիչն թողուլ եւ շարժնոցն
պաշտօն տանել. (սուղջ իւլու ժործ չէ։) Ալոց է
տեսանել, եւ ականջոց՝ լոել։

Այսպէս նաեւ՝ Յետին անհրաժեան է. զերին
յիշարժութեան է զայդ ասել։ Ալերջն ասդիճան իւն-
նութեան ժործ է այդ իսուն ըսելը։

ԳԼՈՒԽ Ժ.

ԲԱՑԻ ԵՎԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Ռայերու եղանակաց ու ժամանակաց դորձ-
ածութեան այն մասանցը վրայ միայն կը խօսինք՝
որ գրաբարի յատուկ են եւ աշխարհաբարէ տարբեր։

ՅՈՒԹԻԾԸ

Դ Ի Մ Ա Տ Ո Ր Ե Վ Ա Ն Ա Կ Ն Ե Ր

1. Սահմանական եղանակ:

Ա. Աահմանական անկատարք կատարեալ ժամանակին տեղ յաճախ կը գործ ածուի: Այսպէս մէկ անգամ կատարուած գործոյ համար կ'ըսուի՝ Խօսել սկսանէր եւ սուր: Խօսելու սկսան եւ ըստ: — Իբրեւ որ մի վնէր պարապոյ: Զնա անգէն սպանանէր. եւայլն:

Բ. Աահմանական անկատարն ու գերակատարն իբրեւ ստորադասական եղանակի ժամանակ ալ կը գործածուին՝ այսպէս:

Մարդ չէր որ գործէր զերկիր: Մարդ չէր որ գետինը բանէր: Ատամ եօղ ուտու քի եէրլէրի իշլէյէ իտի: — Լաւ էր թէ չէր իսկ ձնեալ մարդն այն: Լաւ թոյն էր որ ձնած ու չըլլը: — Երանի թէ սորսէի:

Գ. Ապառնին երեքպատիկ գործածութիւն ունի. 1. բուն ապառնւոյ նշանակութեամբ՝ գալիքն ու ըլլալիքը ցուցընելով. 2. իբրեւ հրամայական՝ մանաւանդ Ա եւ Գ դէմքի. եւ 3. ստորադասականին տեղ:*

1. Գ. Բուն ապառնւոյ նշանակութեամբն հաւասար է լց եմ բաղադրեալ ժամանակին:

Արդարըն ծաբեսցին իբրեւ զարեգակն: Եինցին յարեւելից եւ յարեւմոից, եւ բաշնցին ընդ Աբրահամու: Մարդարէ յարուցէ ձեզ Տէր յեղ-

* Այս երեքպատիկ նշանակութիւնը տճկ. լեզուին այլեւայլ յատուկ ժամանակներովը կ'որոշուի. որ են՝ 1. իւօրէնէլիք, 2. իւօրէյք, 3. իւօրէք եւ իւօրէբակք:

բարց ձերոց : Զի՞ հործեսցես յայնժամ : Ընդ ա-
մենայն դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ՝ ոռ-
շեն համարս : (Այսինքն՝ հուլոց էն, բաշխոց էն,
հործելոց էցես . եւայլն :)

Որու կերպով ըլլալիք ցուցընողն է բաղադրեալ
ժամանակը՝ հուլոց էր. լնելոց էր. ոռլոց էցես, եւայլն.
որ է իրական կամ պատմական ապառնի : Լուլոց է +
համբաւս պատերազմաց : Հրեայք ի զուր ակնկալու-
թիւն կապեալ կան՝ եթէ դաւիթ հուլոց և շնել զե-
րուսաղէմ : Զի՞նչ էցես ոռլոց : — Իսկ հուլոց էր, լն-
ելոց է + եւայլն անկատար ապառնոյն տեղն ուրիշ
ժամանակ չի գործածուիր. բայց ուրիշ կերպերով կը-
սուի : Հանդերձնուլ է + ելանել . (Ելանելոց է +.) եւ
ներկայ Յո՞ւնիցեն էուլուլ . (ո՞ւր պիտի փախչիս) Ու-
նի՞ ես ցացանել քեզ : Մեզ յանդիմոն լնել իսյ առաջի
բեմին Քրիստոսի :

2. Ե. Ապառնոյն երկրորդ գործածութիւնը
գլխաւորաբար Ա եւ Գ դէմքի հրամայական ձեւա-
ցընելու համար է :

Անցեալ ուեսէց զտեսիլն զայն մեծ . (Երեսամ ուես-
նէմ :) Մէ՛ ուեսէց զմահ որդեւոյ իմոյ . (Հուեսնէմ :)
Մէ՛ լիցու+ սնապարծք : Եկայք ելու+ առ նա:
Ընդ հանձարեղս եղիցի զըսց քո : Լուկանի զայս
մեծատունիք, եւ յամօթ լիցին : Ասսացու+ եւ իջել
հուր յերկնից . (ըսէն+ որ իջնայ :)

Մէ՛ արդելականին քով երկրորդ դէմքը սո-
վորաբար ստորագասական կը դրուի . Մէ՛ երեսացէ+
զհետ : Մէ՛ լնեցի+ կամ՝ մի էցի+ յանձինս ապառ-
տանիք : Մէ՛ իւսուլուցի+ : Մէ՛ ինչ առնիցէս : (Փխկ՝ մի
երեսիցի+, մի եղիցի+, մի իւսուլուցի+, եւայլն :)

* Այստեղ լաւ միտք առնուլ պէսք է ու բացասակա-
նին եւ մ' արդելականին իրարմէ զանազանութիւնը:
Ու ուեսէց, չպիտի տեսնեմ, (իւսուլուցի+) եւ Մէ՛ ու-
եց, չտեսնեմ, (իւսուլուցի+) — Զի՞ ու երեսիցին, վասն-
զի չերթան պիտի . Զի՞ մ' երեսիցին, որպէսզի չերթան :

Յ. Զ. Առորադասական ներկայի տեղ սահմ.
ապառնի յաճախ կը գործածուի, մանաւանդ՝ որ,
ենէ, մինչեւ բառերէն ետեւ. եւ աւելի՝ (որդէն) զի
շաղկապով:

Որ համբերեցէն ի ապառ՝ նա կեցցէ: Կատարուք
ոյդր՝ մինչեւ երեսյա իշտից յաղօթու: — Պա-
տրաստեցէք զօրականս երկերիւր՝ որպէս զի եր-
եսիցէն մինչեւ ի կեսարիա: Եկաք զի սերեցու-
ղտեղիս, եւ զքեղ սպանցու: Զի մի սոցէն. եւն:

Է. Դարձեալ շատ անգամ ապառնի կը
դրուի՝ աշխարհաբար սահմ. ներկային տեղ, մա-
նաւանդ առակաւոր եւ վճռական խօսքի մէջ:

Յորժամ ժամ լինիցի՝ իսկեցից զքեզ: Առէնն որ
էյ՝ իւ իւնչեմ շնել: — Որ յաճախէ զքան իւր՝
որհամարնեցի: Շուր շրացուը իւրհամարնեցի:

Ը. Խոկ էմ բային՝ վասնզի ապառնի չունի՝
անօր տեղ ստորադասականը կը գործածուի:

Այսօր ընդ իս իշես ի դրախտին: Իշեն յե-
տինք որ եղեցին առաջինք, եւ իշեն առաջինք որ
եղեցին յետինք: Ե՞րբ իշէ զի մեռցի:

2. Մտորադասական եղանակ:

Ա. Շատ անգամ սահմ. ներկայի տեղ գրա-
բար ստորադասական կը դրուի, մանաւանդ՝ որ, ո-ր,
ենէ եւայլն բառերէն ետեւ:

Որոյ իսցէ՝ կերիցէ եւ արբյէ, եւ տացէ այնմիկ
որոյ ոշն իսցէ: Ու որ ս-նէ՝ ն-ու ս-ու ս- ի-ն,
եւ շ-նեց-նին այս: — Լաւ է որ քործիցէ ի վո-
զոցի, քան որ սիսցէ եւ հացիւ կարօտ իշէ: Եթէ սակածք իցեն ողք սորելոց իշեն: Ուր սէր
սերտ իշէ՝ շիք նախանձ:

Թոււի ինձ թէ մարդարէ իշես դու: Եթէ անանկ
իշես՝ մի ինչ տաղնապիր:

Գիտնալու է որ ամէն տեղ այս բառերէն, մանու-
անդ որ յարաբերականէն ետեւ չի կրնար ստորադա-
սական դրուիլ, այլ միայն՝ երբ խօսքն ենթադրու-
թեամբ կամ թեութեամբ ըսուած է:

Բ. Ատորդս. կը դրուի դարձեալ՝ երբ բայր կէս
հարցական բառի վրայ ընկած է, (այսինքն՝ հարցա-
կան բառի մ'որ առանց իրական հարցման կը բանի:)

Ոչ գիտեք երբ ժամանակն իշէ: Հարցանէր թէ
զինչ իշէ այն: Հարց թէ ոյր որդի իշէ պատա-
նեակդ:

Գ. Ի՞ացասականէ ետեւ նէ շաղկապ որ գայ՝
փխկ չէ կամ եւ շաղկապի. (տես եր. 130, չոր-
րորդ Ենէ:)

Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով եւ հայիցի յետո՝
Ենէ յաջողեալ իշէ արքայութեան Աստուծոյ:
Զորդ մորդ որ յեւ+ը մահին շորիուծ՝ ետեւ նայէ, եւ
Աստուծոյ որ+ոյու-նեանն յորմոր ըլլոյ: — Ոչ ոք
զինուորեալ աստէն՝ ընդ կեանս աշխարհիս պա-
տաղի, Ենէ զօրավարին համոյ լինիշէ: Ոչ ոք է որ
եթող զոտւն կամ զագարակօ վասն Աստուծոյ՝
Ենէ ոչ առաջարկ հարիւրապատիկ: Ոչ ես իրեւ
զիս մարդ՝ Ենէ հասարակ եխեցու+ի դատաստան.
(Ընչէ նման մորդ չէ՝ որ հասարակութիւն դուր
ելլէն+:)

Դ. Ատորադասականը սահմ. ապառնոյ տեղ
ալ կը զործածուի*. բայց ոչ հրամայական նշանա-
կութեամբն որ տեսանքը վերը՝ երես 224, Ե:)

* Ինչպէս վերջին օրինակիդ մէջ Եիւցու+ փխկ Քայշերի:
— Միեւնոյն խօսքին մէջ շատ անգամ երկուքն ալ
հաւասարապէս կը գտնուին: Մ-ունեցուն զձեզ յա-
տեանս, եւ առաջի դատաւորաց ունէցին զձեզ: Ընդ ո՞
շորմայցէս, զո՞ Քովեցուն: — Ուր ստորադասականներն
իրեւ ապառնի են: Այսպէս կրաւորական ապառնոյ
տեղ՝ Մին առաջարկ եւ միւսն բազուցու. (մէկն առ-
նուի պիտի ու միւսը թողուի.) որ կ'ըսուի նաեւ ա-
պառնիով՝ Մին առցի եւ միւսն բազու:

Ե. Վինչեւ այստեղ յիշուած ստորադասաւ-
կանը նախընթաց բառի մը հետ կապուած էր: Իսկ
մինակ մնացած ստորադասական կը գործածուի՝
1. հարցումն, 2. մակաբերութիւն, (անշուշտ սանկ
ու նանկ է.) եւ 3. ուրիշի կարծածն ու բամբը ցու-
ցընելու. (տճկ. Այսէր, ի՞նչ:

1. Հրցու) Եթէ բնակեցէ Աստուած ընդ մարդկան:
Եթէ ողջոյն իցէ մանկանն: Հուրն աստուած իցէ.
Եւ շահագէտ եւ վորոնացէտ. (չէտ ու ահնուք:)
Միթէ եւ մեք կոյրք իցետ:

2. Մկրեր:) Զայն մուշեւլ իցէ նոցա: Ան մուշած
ոկորէ ըլլան: — Արդ հորեւլ իցէ մեռեալն, քան-
զի չորեքօրեայ է: Քանի վարձկանք իցեն ի տան
հօր իմոյ: Իյէն որ բնաւ հրով ոյրեւլ իցեն, եւ
զմոխիրն՝ անձրեւաց ողջովուլ իցէ: (Անշաւը իբ-
իւլ այրածներ ու իւն, որոնց մինիւն այրեւները
իսկոծ ուրած ըլլալ էն:)

3. Եղեր:) Զմեծին աստուածոյ Արտեմեայ զմեհեանն
յոչինչ համարել. նա եւ ուիւլց եւս իցէ մեծու-
թիւն նորա: Ո՛ծաղը եւ կատականք, զի վնասելն
կարէ արեգակն՝ աստուած իցէ. (Ըստեւլ իւրենա-
լուն համար ասդուսած է եղեր:)

Յ Ս Դ Ա Խ Ա Յ Ա Ր Ե Ր

Ա Ն Դ Է Մ Ե Ղ Ա Ն Ա Կ Ն Ե Ր

Բայերուն Անդէմ եղանակներն են Աներեւ-
ոյթ եւ Ընդունելութիւն. որոնք երբեմն իբրեւ բայ
եւ երբեմն իբրեւ անուն դործածուելնուն համար
բայէն զատ մասն բանի համարուած են:

Անդէմ ժամանակները, մանաւանդ աներեւ-
ոյթը, կրնան շատ անգամ դիմաւոր բայի տեղ
դրուիլ, կամ դիմաւոր բայ մ'ասոնց տեղ կրնայ
դրուիլ. ինչպէս վարը պիտի ըսենք:

1. Ամերենոյթ գոյական:

ԱՆԵՐԵ-ԱՅԻ Ն-Ի-ՌԵ-:

Աւասիկ նախդրիւ հոլովերուն օրինակները:
Տրկ.) Կարիճ է հարիւնել եւեթ կաղմ կայ: Տհի.
Ագրեպ հեմեն սօգմաղա հազըր տուրուր: —
Նաւն ի վտանգի կայր է իսորուսիւլ: Ոչ եւս եղեցի
ջրհեղեղ է սարսիւլ զամենայն մարմին: Այրե-
ցին զսկերս թագաւորաց է մոխել. (Էրեցին մո-
խիր ըրին:) — Պատուհանք բացեալք՝ ու է
հայել: Կապեցէք զորոմնդ ի խրձունս ու է յայ-
րել. (Նայելու համար. Էրուելու համար:) — Ըս-
պէք գինի շարբենաւ. (Գինովենալու չափ:)
Գիտաց թէ ու նենդէն նենգէ նմա: Խմացա- որ
ի-ը ըբած նենդունեան դիմաց ան ու իրեն ի ը նենդէ:
Զիոց սանձս ի բերան դնեմք ու անուալյ նոցամեզ:
Ներգոյ.) Ի բառանաւ մարդկան աճեցին չարիքն:
Մի լիցիս յօժար յառնուն ձեռօք, եւ է առն
կարկամ: — Ընդ երնուն նորա ժողովուրդքն
նեղեին զնա: Ընդ իսուն նոցա եւ ընդ ինձել. Ընդ
արեւուն մոռնել. Ընդ բանաւ դրանցն:

Բցու. Խնդրով ու:) Զցայգ եւ զցերեկ գործէաք
ու է չշանըանալյ ձեղ. (Արդէսչի յեղի ժանըունիւն
ուլլուն:) Սատակել զձեր զայր եւ զկին՝ ու է
չհնալյ ումեք ի ձէնջ. (այնպէս որ մարդ չմնայ:)
— Մաշեցի զկոշոս երկրի ու է զթարախս +երելոյ.
(Քերելէն:)

Բ. Երբ ու կամ է կամ ու է գրաւած են
համար, որպէս չի նշանակութեամբ, կրնան նախդիր-
ները բոլորովին զեղչուիլ, որով աներեւոյթ մինակ
կը մնայ. այսպէս:

Ոչ եւս եղեցի ջրհեղեղ՝ սարսիւլ զամենայն
մարմին: Ոչ գոյ մեզ ժամ բանաւ զբերանս մեր.
(Փիսկ՝ ու է բանաւ, կամ բանալոյ:) Տես դ եւ Ե:

Գ. Երբ երկու կամ աւելի նախդրիւ անեւրեւոյթիր իրար յաջորդեն, նախդիրը՝ մանաւանդ է, յ շատ անդամ առաջին աներեւութիւն վրայ միայն կը դրուի: Այսպէս.

Յեւնել նոցա յերսւսաղէմ եւ ի-ուրել զաւուրսն եւ բանալ անդրէն. (փխկ՝ յելանել եւ ի կատարել եւ ի դառնալ:) Ի ու եւ ա-նուլ զըունչն: — Այսպէս նաեւ՝ Յօհնէլը եւ իսուրուն լինել. Քան զէու-հասանելը. զէրնալ-հասանելը, եւայլն:

Բայց աներեւութիւն նախդիրը հարկ է զեղչել՝ երբ աներեւոյթն իրմէ յառաջ նախդրիւ խնդիր մ'ունի: — Յընկենուլ նոցա զհանդերձս եւ զփոշին շանել յօդս. (եւ ի ցանել զփոշին յօդս:) Եւ ի քուն լինել մարդկան եկն թշնամին. (ի լինել մարդկանն ի քուն:) Ի ճանապարհ անհանել նոցա եւ մօտ ի քաղաքն լինել. (յանկանել նոցա ի ճան. եւ ի լինել մօտ ի քաղաքն:)

Դ. *ոլովեալ աներեւութիւն տեղ շատ անդամ անհոլով աներեւոյթ կը գործածուի:

Բայց այն ատեն միշտ դոյական չէ աներեւոյթն, այլ անդէմ բայ է՝ զէ, որդեռ զէ, ոյնու զէ շաղկապով կապուած դիմաւոր բայի տեղ: Զորօրինակ փխկ ըսելու Տայ զօրութիւն գիրս նորդ հանելը, (որ յատկացուցիչ է,) կըսուի նաեւ՝ Տայ զօրութիւն գիրս նորդ հանել. (որ բայ է անդէմ.) Փոխանակ՝ զէ նորդ հանելը:

Ե. Անհոլով աներեւութիւն գործածութիւնը դիսաւրաբար երկուք է: — 1. Ուր որ բնականապէս անհոլով պէտք է մնալ, այսինքն ուղղական կամ անորոշ հայցական. (Արժան է հարկս ու. — ոչ կամիմք մերի անալ.) Եւ 2. այլեւայլ հոլովներու տեղ, եւ մանաւանդ է, ու, ու է նախդրիւ հոլովներուն տեղ:

Իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ: Զուել ի-ու հանելու իշխանունիւն ունիմ. (փխկ՝ հանելը:)

— գլխաւոր բային նպառակը ցուցընելու համար։
Եկին լեւ ի նմանէ։ Յարեաւ ընկեռութ։ այս-
ինքն՝ չի լուցեն, չի ընկերոցի։ — (Նախդրիւ
կ'ըսուի՝ Ի լեւ եկեալ եմ ես։ Կերան եւ արբին,
եւ յարեան ի իտուլ։)

Աթենացիք ոչ յայլ ինչ պարապէին՝ բայց առեւ
կամ լեւ նորագոյնս։ (յասել, ի լսել։) Պատրաստ
իցեք առև պատասխանի։ Առին հրաման չդառ-
նաւ անդրէն։

Կանայք հայս հարկանեն՝ առնեւ կարկանդակս. (տճ.
ովեօքէ + եականը իւսութ եօլուրութւուլուն։) Բերին
ջուր՝ լուսաւ զոտս նոցա։

Աննախդիր (առանց ի նախդրի) կը դործա-
ծուին ասոնքը եւ նմանները. Հանդերձեալ եմք
գնաւ. կազմի գու ի վերայ քո. ոսվոր են հայնոյեւ.
մերձ էին զգուրան իւրուիւլ. եւայլն։

Արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ շունչնութ։
Սկիզբն լինի բուռնեւ թեւոցն։ Հերովդէս ի
խնդիր է ապաւնեւ զմանուկութ։ (Փիսկ՝ շունչը,
բուռնեւը, եւն։)

Ուրիշ այլեւայլ վերջահոլովներու տեղ դրուած
անհոլով աներեւոյթները տես այստեղ իւրաքան-
չիւր հոլովոց կարգին մէջ։

Աներեւոյն Աւունեւ։

Զ. Աւուական աներեւութին նախադաս հայ-
ցական խնդիրն երբեմն սեռականի կը դառնայ՝ ան-
երեւութին համաձայնելով։ Այսպէս. Ժամանակ
այսէսց յարանեւը, փիսկ՝ շոյիս յատանելոյ։

Ետուն վարձ՝ նաւաց գործեւը։ Նաւեւ լինեւ առա-
րուն։ — Յորժամ ոտն կծիցէ, ասեն, ճան-
ուրհի գնաւը նշանակ է։

Այսպէս եւս՝ Յետ հաւար մի յաշ առնեւ։

(փիսկ՝ շնուշտը ամ:) Առանց քրեժուց ինդրելոյ: Ժամանակ գործոյ հնյելոյ: (քրեժոյ խնդրու գործի հնձ:)

Եւ երբեմն սեռականի մը քովի ներդոյական աներեւոյթն ալ սեռականի կը դառնայ. այսպէս. Պարագաւոյ լուսնին, փիսկ՝ ի դարձնել լուսնին: Եւ այս կը կոչուի Բարձրական ուստիւն: Զօրոցն ընդ դրունսն իշխելոյ: Կամեր ելանել ի վեր. (փիսկ՝ զօրացն ընդ դրունսն իշխելու) Զօրին՝ Պարձնական յըրակալուն՝ ինչ ուղղական ելու: — Սաստիկ վասն նորին իրաց գործուց: Եւայլն:

Այս բացարձակ սեռականն երբեմն ընդուն. անցելով ալ կը ձեւանայ. (տես եր. 239:)

Բացարձակ սեռականն յունաձեւ ոճ է. եւ միայն քանի մը դրոց մէջ երբեմն կը տեսնուի:

ԱՆԵՐԵ-ԱՅՐ ՏՐ-Ք-Ն:

Ը. Ի՞այերու, նաեւ գոյականներու խնդիր կ'ըլլայ տրական աներեւոյթ՝ վախճան, նորագույն, որոշ ցուցընելով, — աշխարհաբարի նման:

Ո՞ տացէ մեզ միս ու-դելոյ: Եշքդ՝ նորելոյ արքայի են. (ուտելու միս. նստելու էշեր:)

Երբեմն նաեւ մինչեւ նախադրութենէ ետեւ: Խջանեին ջուրքն՝ մինչեւ ի ոպառ նուռադելոյ: Մինչեւ արեւուն մոռնելոյ: Փիսկ՝ մինչեւ ցնուռադել, մինչեւ ի մոռնել:

ԱՆԵՐԵ-ԱՅՐ Հ-Ա-Ջ-Ք-Ն:

Թ. Շատներդործական ու նաեւ չեզոք բայեր աներեւոյթ հայցական խնդիր սեռի կ'առնուն, — սովորաբար անորոշ հայցական:

Կամիմք նշան ինչ դեսնել: Մի խնդրեր լինել դատաւոր: Ոչ զիտեն իօսել հրեկրէն. եւայլն:

Եթէ պէտք ըլլայ՝ որոշեալ հայցական ալ կը դրուի. ինչպէս՝ Վախճանեաց զս-դելն. (ուտելը

լմբնցուց:) Զղջացաւ շահուանանալ: Չառնոյր յանձն չէր լու:

Ժ. Այսպէս անօրոշ հայցական աներեւոյթ կ'առնուն ուցանեմ մասնկան տեղ գրուող բայերը՝ դամ, առնեմ. (Եր. 67:)

Դեմքտրիսս դարտարացն լինել ոչ սակաւ շահ: Ես նմա յայտնի լինել: Երան ինձ ստել: * — Արև այսր ճառնել: Ես արարէց քեզ ժառնել զայդին: Արարէց զձեզ լինել որսորդս:

ԺԱ. Պահմաւոր բայէն յառաջ իւր աներեւոյթն աւելցընելով՝ խօսքը հասարակօրէն նէղէտ է-, այ՛, աղածէն բառերով ըսուած կ'ըլլայ: — Այս աներեւոյթ խնդիրը սօվորաբար անօրոշ հայցական է. քիչ տեղ կայ որոշեալ հայցական:

